Ministry of Nature Protection

Empowered lives.
Resilient nations.

ՀՀ Երկամյա առաջընթացի առաջին զեկույցի միջազգային գնահատման արդյունքները և դրանից քաղված դասերը

ՋԳ ազգային կադաստրի մշակման աշխատաժողով
14 փետրվարի 2017թ.

Մարինա Սարգսյան
ԵԱՋ-ի մշակման պատասխանատու փորձագետ

Երկամյա առաջընթացի զեկույցի մշակման իրավական հիմքերը և շրջանակը

- ՄԱԿ Կլիմայի փոփոխության շրջանակային կոնվենցիայի Կողմերի կոնֆերանսի 1/16 և 2/17 որոշումների համաձայն՝ զարգացող երկրները երկու տարին մեկ անգամ պետք է ներկայացնեն Երկամյա առաջընթացի զեկույց, որը ընդգրկում է թարմացված տեղեկատվություն ազգային պայմանների, ջերմոցային գազերի ազգային կադաստրի կլիմայի մեղմման միջոցառումների, ստացված ու պահանջվող աջակցության և Չափումների, հաշվետվայնության ու հավաստագրման համակարգի մասին և ենթակա են Միջազգային խորհրդատվության և վերլուծության:
- Առ այսօր Հավելված I-ում չընդգրկված 155 երկներից միայն 36 երկիր ներկայացրել են իրենց Երկամյա առաջընթացի առաջին զեկույցը:

ՋԳ կադաստրի տարին Երկամյա զեկույցներում

- Ըստ ԿԿ 2/17 Որոշմամբ ընդունված Ուղեցույցի՝ ՋԳ Կադաստրի տարին պետք է լինի օրացուցային տարի, ոչ ավելի վաղ, քան 4 տարի երկամյա ա-ռաջընթացի զեկույցի ներկայացման տարուց:
- ՀՀ Երկամյա առաջընթացի առաջին զեկույցը ներկայացվել է 2016թ. ապրիլին, այն ներառում է 2011 և 2012թթ. ՋԳ ազգային կադաստրը:
- ՀՀ Երկամյա առաջընթացի երկրորդ զեկույցի մշակումը մեկնարկել է 2016թ.դեկտեմբերին, ներառում է 2013,2014թթ. Ազգային կադաստրը:
- Ըստ ՀՀ կառավարության 2016թ. N 49-8 Արձանագրային որոշման 2013, 2014թթ. Ազգային կադաստրի և երկամյա առաջընթացի երկրորդ զեկույցի մշակման և կոնվենցիայի քարտուղարությանը ներկայացման ժամկետներն են 2017 և 2018 թթ., համապատասխանաբար:

Առաջին երկամյա զեկույցի 2011 և 2012 թթ. ազգային կադաստրի բարելավումները

- Արտանետումների աղբյուրների 11 ենթակատեգորիաների համար կիրառվել է ավելի բարձր կարգի մեթոդաբանություն:
- Մշակվել են 5 ազգային գործակիցներ հիմնական աղբյուրների համար:
- Հաշվարկվել են ՋԳ արտանետումները 6 նոր ենթակատեգորիաների համար:

Առաջին երկամյա զեկույցի Ազգային կադաստրի բարելավումները ըստ սեկտորների

«Էներգետիկա» սեկտոր.

- ՋԳ արտանետումները, որոնք առաջանում են բնական գազի այրման արդյունքում գնահատվել են երկրորդ կարգի մեթոդաբանությամբ՝ ազգային գործակիցների կիրառմամբ:
- Բնական գազի փախուստային արտանետումները գնահատվել են երկրորդ կարգի մեթոդաբանությամբ՝ ազգային գործակիցների կիրառմամբ:

«ԱՊԱՕ» սեկտոր.

- «Ցեմենտի արտադրությունից» CO2 արտանետումները հաշվարկվել են երրորդ կարգի մեթոդաբանությամբ՝ ի տարբերություն Երրորդ ազգային կադաստրի, որտեղ հաշվարկներն իրականացվել էին երկրորդ կարգի մեթոդաբանությամբ, իսկ երրորդ կարգի մեթոդաբանությամբ հաշվարկը բերվել էր խաչաձև ստուգման և համեմատական վերլուծության նպատակով:

ՋԳ ազգային կադաստրի վերլուծություն միջազգային փորձագետի կողմից

- Ազգային կադաստրի հաշվետվության նախնական տարբերակը ստուգվել է Ազգային հաղորդագրությունների և երկամյա առաջընթացի զեկույցների համաշխարհային աջակցության ծրագրի (GSP) միջազգային փորձագետի կողմից:
- Հաշվետվության վերաբերյալ ստացված մեկնաբանությունները կտրամադրվեն զեկույցի մշակմանը մասնակցող փորձագետներին՝ ըստ համապատասխան սեկտորների:

Զարգացող երկրների Երկամյա զեկույցների Միջազգային խորհրդատվություն և վերլուծություն

Երկամյա զեկույցների Միջազգային խորհրդատվություն և վերլուծություն

- ՄԱԿ Կլիմայի փոփոխության շրջանակային կոնվենցիայի Կողմերի կոնֆերանսի 20/19 որոշմամբ սահմանվել են զարգացող երկրների կողմից ներկայացվող երկամյա առաջընթացի զեկույցների միջազգային խորհրդատվության և վերլուծության (ICA) շրջանակները:
- Միջազգային խորհրդատվության և վերլուծության (ՄԽՎ) գործընթացը լիովին նոր գործընթաց է և նախկինում չի կիրառվել զարգացող երկրների կողմից ներկայացված ազգային հաղորդագրությունների նկատմամբ:

Միջազգային խորհրդատվության և վերլուծության նպատակը և շրջանակները

- Այս գործընթացի նպատակն է բարձրացնել մեղման գործողությունների և դրանց ազդեցության թափանցիկությունը, ինչպես նաև նպաստել կարողությունների ամրապնդմանը՝ երկամյա զեկույցների որակի բարելավման համար:
- ՄԽՎ գործընթացը բաղկացած է երկու փուլերից.
  - Երկամյա զեկույցների տեխնիկական վերլուծություն՝ տեխնիկական մասնագետների թիմի կողմից (TTE):
  - Կարծիքների փոխանակում սեմինարի ժամանակ՝ Իրականացման օժանդակ մարմնի ներքո:

Տեխնիկական վերլուծության շրջանակները

Տեխնիկական վերլուծության ընթացքում պետք է բացահայտվի, թե որքանով Կողմ երկրի կողմից ներկայացված զեկույցը ներառում է Ուղեցույցով նախատեսված հիմնական տեղեկատվությունը, ներառյալ.

- ազգային պայմանները և ինստիտուցիոնալ կառուցվածքը,
- ջերմոցային գազերի ազգային կադաստրը,
- մեղման միջոցառումների նկարագրությունը (ազդեցությունը, կիրառված մեթոդաբանությունը, առաջընթացը),
- ստացված ու պահանջվող աջակցությունը և
- Չափումների, հաշվետվայնության ու հավաստագրման համակարգի մասին տեղեկատվություն:

Ինչ է տեղի ունենում Երկամյա զեկույցների հետ ԿՓՇԿ-ին ներկայացնելուց հետո

Երկամյա առաջընթացի զեկույցի ներկայացում

Տեխնիկական վերլուծություն

- Տեխնիկական փորձագետների թիմի կազմում (TTE)
- Զեկույցի տեխնիկական վերլուծություն փորձագետների թիմի (TTE) կողմից
- Մեկնաբանությունների և պատասխանների փոխանակում 2 փուլով
- Ամփոփ հաշվետվության նախագիծ (TASR)
- Ամփոփ հաշվետվության վերանայում և մեկնաբանում երկրի կողմից
- Տեխնիկական վերլուծության ամփոփ հաշվետվության վերջնական օրինակ

Մեկնաբանություն-ների և պատասխանների փոխանակում

- Սեմինար երկրի կամ երկրների խմբի համար
- Երկրների կողմից Երկամյա առաջընթացի զեկույցի վերաբերյալ հակիրճ ներկայացում, որին հաջորդում է բանավոր հարցուպատասխան երկրների միջև

Միջազգային Խորհրդատվության և Վերլուծության Արդյունքը

- ✓ Ամփոփ հաշվետվության ամրագրում և UNFCCC կայքում տեղադրում
- ✓ Մտքերի փոխանակման արձանագրություն

Տեխնիկական վերլուծության ժամկետները



ՀՀ Առաջին երկամյա զեկույցի վերլուծության ընթացիկ վիճակը

- ՀՀ Երկամյա առաջընթացի առաջին զեկույցը անցել է տեխնիկական վերլուծության առաջին չորս փուլը. ամփոփ հաշվետվության (SR) սկզբնաննախնական օրինակը ներկայացվել է երկրին և ներկայումս մենք գտնվում ենք «Ամփոփ հաշվետվության վերանայում և մեկնաբանում երկրի կողմից» փուլում:
- Երկրի մեկնաբանություններից հետո մշակվում է Ամփոփ հաշվետվություն, որը կհրապարակվի 2017թ. մարտին ԿՓՇԿ-ի կայքում:
- Հաջորդ փուլում, Կոնվենցիայի Իրականացման օժանդակ մարմնի նիստում, որը կայանալու է 2017թ. մայիսին, տեղի կունենա Երկամյա առաջընթացի զեկույցի վերաբերյալ հակիրճ ներկայացումը, որին հաջորդում է բանավոր հարցուպատասխանը:

ՀՀ Առաջին երկամյա զեկույցի տեխնիկական վերլուծության եզրակացությունները

- Տեխնիկական փորձագետների թիմի կողմից իրականացված վերլուծության հիմնական մեկնաբանությունները ՋԳ ազգային կադաստրի վերաբերյալ.
  - 1990,1994-1996թթ.չեն ընդգրկվել՝ ժամանակային շարքերում
  - Արտանետումների գործակիցների մեծամասնության համար չեն գնահատվել անորոշությունները և չի գնահատվել հիմնական աղբյուրների անորոշությունը:

Երկրորդ երկամյա զեկույցի 2013 և 2014 թթ. ՋԳ կադաստրում նախատեսվող բարելավումները

- Արտանետումների հիմնական աղբյուրների համար անցում հաշվարկման ավելի բարձր կարգի մեթոդաբանության՝ ելակետային տվյալների ամբողջականացմամբ և ազգային գործակիցների կիրառմամբ:
- Նոր ենթակատեգորիաների դիտարկում:

Ըստ սեկտորների օրնակներ.

- **«Էներգետիկա» սեկտոր**. «Արդյունաբերություն և շինարարություն» կատեգորիայում նախատեսվում է դիտարկել նոր 13 ենթակատեգորիաներ:
- **«ԱՊԱՕ» սեկտոր**. Գնահատել ապակու արտադրությունից առաջացած ջերմոցային գազերի արտանետումները 3-րդ կարգի մեթոդաբանությամբ:

Ինստիտուցիոնալ հարցեր

- ԿՓԾԿ ներքո Հավելված I-ում չընդգրկված երկրների կողմից ներկայացվող զեկույցների հանդեպ խստացված պահանջների (ինչպես հաճախականության, այնպես էլ բովանդակության առումներով) համատեքստում կարևորվում է ինստիտուցիոնալ հարցերը, որոնք թույլ կտան շարունակական հիմքերով մշակել երկամյա զեկույցները և ՋԳ ազգային կադաստրը: Այս առումով առանձնահատուկ կարևորվում է անհրաժեշտ տվյալների բազայի ստեղծման հարցը:
- «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքի նախագծի հայեցակարգի համաձայն՝ «Մթնոլորտային օդի պահպանության մասին» նոր խմբագրությամբ օրենքում սահմանվելու է ջերմոցային գազերի արտանետումների (անշարժ և շարժական աղբյուրներից) հաշվառման և տվյալների արխիվացման միասնական համակարգի ստեղծման վերաբերյալ դրույթը: